պէս զօրութեամբ նորին վերահաստատեալ լինի Վէնէտիկու հայոց կարգն և միաբանութիւնն. վասն որոյ վերոյասացեալ հօռոմ քահանան յաժմս ընդ այլ ումեմն տեղեակ անձամբ բովանդակ փափերու պօլլարիօն ընթեռնուն վասն տեսանելոյ եթէ կա՞ կամ թէ ոչ՝ այդպիսի վերայհաստատութիւն Կրոնի Հայոց։...

Յաժմս փափն Հռոմայու դուրս է. սուրբ պետրոսի տօնին դառնալոց է. եթէ տէր հաճեսցի ես սուրբ պետրոսի երկրորդ օրն ալպան դառնալոց եմ ընդ քարտինալ քարաֆին, որ մտած ամսի երկրորդ օրն մեր Կուսանաց հանդերձ պիտի տայ այսինքն կրօնաւորական, որ այնուհետև կոչեն յիսուսա և մարիամայ կուսանք. տէր յիսուս իւրեանց առաւել շնորհս տայ և միշտ պաշտպանէ զնոսա որ նեկայս և ապագայ եկողքն՝ ճշմարտապէս լինին հետևողուհիք յիսուսի և մարիամու։

Այս ամսուս մէջն ըստ իմոյ տկարութեան սրբոյն Պենէտիքտոսի պատկերն եզեր կու հասուցանեմ, միուս ամիսն տամպուրաճու արութէնին հետ, կամ ճէվահիրճի երեմիային յղեցից գերյարգելութեան ձերում։...

Հռոմայ. ամի տեառն 1742 Ծառայ
ունիսի 8 Պատկերահան Յոհաննէս

ՃԸ.

Ուղղափառ Հայոց առաջին Պատրիարքն է նամակագիրս, որ Հռովմէն կը գրէ ուղղակի առ Մխիթար։

Թուղթիս մէկ ակնարկութիւնը կը հայի այն գրոյն՝ որով Մխիթարայ առաջնորդութեան կ'առաջարկուէր գլխովին Զմմառի Միաբանութիւնը։ Այդ մասին՝ բաց ի Նիկողայոս Վարդապետի մեր հրատարակած նամակէն (տես «Մայր Դիւան», Թուղթ ՂԶ) բանասէրք արդէն պիտի գտնեն Լիբանանցի Հ. Պետրոս Ներսեսեանի նամակը (1741 Սեպտ. 3)[1], իսկ ասկէ առաջ բուն պաշտօնականը՝ դարձեալ Աբրահամ կաթողիկոսէ ղրկուած թուղթը (1741 Յուլիս 18), հանդերձ ստորագրութեամբ նոյն Ուխտի քահանայ և ուխտեալ Միաբանից[2]։

Ամենապայծառ եղբօրդ իմոյ Մխիթար աստուածապան վարդապետիդ. Ողջուն

Ցայտ առնեմ սիրելագոյն վերայ գրելոյտ. հասի ի Հռոմ օգոստոսի 11, և յոյժ սիրով ընկալեալ եղէ ամենից, յառաջ քան զտեսանելն իմ զվ.հապետն. դեռ և ոչ եմ տեսեալ. ի հարկէ երկրորդ յուխտն իմ տեսանել զվ.երապատուելիդ, բայց կամիմ իմանալ թէ զինչ գրեցեր վասն որդւոց մերոց ի լեառն Լիբանան. զոր յառաջադէմ գրեցի սիրելոյտ, և թէ ոչ գրեցեր զբան ինչ ծանոյ ինձ. և թէ այլ բարի բան և գործ յունիս ի Հռոմ կատարիլ վասն օգտի Հասարակաց, եթէ կամիս և պատկանի տառապելոյս՝ գրեսցես ինձ, և ամենայն օրհնեալ հասարակութեան աբբայիդ օրհնութիւն, Ողջուն և արժանաւոր յարգութիւն մատուցանեմ։ Ողջուն պարոն Խաչիկին յոյժ սիրով որ է սիրելի եղբայրութեանդ և մեր. զի լուայ թէ ամսսնացեալ է. տէր յիսուս պահեսցէ ի ներ[ք]ոյ շնորհաց իւրոց. և ընդ մեզ եղեալք կարօտին աղօթից։

Վերջացուցանեմ սիրով և օրհնութեամբ և եմ պատրաստ ամենայնի ծառայ անպիտան

[Աբրահամ] Պետրոս[Ա]կաթողիկոս

---

1. Թորոսեան, Վարք Մխիթարայ (Ցաւելուած Բ. Կարեւոր բուղքք եւ Նամակներ) էջ 467։
2. Անդ, 462։